Հաստատված է
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ամբիոնի
«11» 01. 2022 թ.-ի նիստում: Արձ. № 1
Ամբիոնի պետ՝
Գ. Խուդոյան
« »----------2022 թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ
/Կազմվել է ուսումնական ծրագրի նախագծի հիման վրա/

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		**ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կառավարում**
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Իրավագիտություն, հեռակա ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ ▪ **մասնաշենք/սենյակ** ▪ **հեռախոս** ▪ **էլ հասցե** ▪ **Web կայքի հասցե**		Վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոն varchakan@ro.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Մ. Մանուկյան 099101035
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		4-րդ կուրս, 8-րդ կիսամյակ

ԿՐԵԴԻՏՆԵՐ		3 /երեք/ կրեդիտ
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ		«ՀՀ Ոստիկանության ստորաբաժանումների կառավարում» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 90 ժամ, լսարանային՝ 14, որից՝ 10 դասախոսություն, 4 սեմինար, 76 ժամ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը երկու անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում առանց եզրափակիչ գնահատման:
ՆԱԽԱՊԱՅՄԱՆ		Դասընթացը կառուցվում է «Ոստիկանության վարչական գործունեություն» դասընթացի իմացության վրա:

ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		
ՆՊԱՏԱԿ **ԽՆԴԻՐՆԵՐ**		Դասընթացի նպատակն է ակադեմիայի շրջանավարտներին նախապատրաստել ոստիկանության համակարգում աշխատելիս իրականացնել կառավարչական գործունեություն: Դասընթացի խնդիրն է սովորողներին գիտելիք տալ տիրապելու ոստիկանության համակարգի կազմակերպման ու տեսության հիմնական դրույթներին ու մեթոդոլոգիային, սովորողներին տալ ոստիկանության մարմինների ծառայությունների ու ստորաբաժանումների աշխատանքի գիտական կազմակերպման համար կայուն գիտելիքներ:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ **1. Իմանա՝**

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1. ՀՀ Սահմանադրություն (06.12.2015 փոփոխություններով) 2. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք (21.03.2018 թիվ ՀՕ-180-Ն) 3. ՀՀ ոստիկանության պետի թիվ 777-Ա հրաման (15.03.2013) 4. ՀՀ ոստիկանության պետի հրամաններ, հրահանգներ, ցուցումներ:
Լրացուցիչ		1.Основы управления в органах внутренних дел – учебник под ред. А. П. Коренева Московский университет МВД России 2002 г. 2. Наука управления: Основы организации и управления в сфере правоохранительной деятельности--- под ред. В. Я. Кикоть, С. С. Маилян, Д. И. Грядовой; Научные школы Московский университет МВД России, 2010 г. 3. Основы управления в органах внутренних дел. Учебник. Под об. ред. д. ю. н., проф.,Н. В. Бугеля Санкт-Петербург 2010 г. 4. Управление организацией: Учебник / Под ред. А.Г. Поршнева, З.П. Румянцевой, Н.А. Саломатина. – 2-е изд., перераб. и доп. М.: ИНФРА-М, 2002.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ		Ստուգարք /ստուգված, չստուգված/:
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		Սովորողը դասընթացից կարող է ունենալ մինչև 100% (ստուգված) առաջադիմություն: Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Ստուգված» կամ «Չստուգված»: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ բ) «Ստուգված», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների, կամ եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները. դ) «Չստուգված», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին:

Ներկայություն		Ուսանողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Ուսանողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ		Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՈՒՄ

Թեմա 1 Կառավարման կազմակերպումը ոստիկանությունում **(6 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Կառավարումը ոստիկանության ստորաբաժանումներում: 2. Ոստիկանության կազմակերպական կառուցվածքը: 3. Կառավարչական և ղեկավարման հարաբերությունները ոստիկանությունում: 4. Ղեկավարի բարոյական հեղինակության հիմնական բաղադրիչները:	Հարցեր 1-4 - կարդացվում է դասախոսություն: Հարցեր 1-4 սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում, ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ:

Թեմա 2 **Գործավարությունը ոստիկանությունում** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Գործավարության էությունը, սկզբունքներն ու խնդիրները: 2. Փաստաթղթաշրջանառության կազմակերպումը ոստիկանությունում: 3. Պլանավորումը ոստիկանության գործունեության մեջ:	Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, վեր են հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են սեմինար պարապմունքի: Հարցեր 1-3 - անցկացվում է սեմինար պարապմունք (սեմինարը կարող է

	անցկացվել խմբային քննարկման միջոցով): Ստուգվում են ընթացիկ առաջադրանք ները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ:

Թեմա 3 **Անձնակազմի կառավարման կազմակերպումը ոստիկանությունում** **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Անձնակազմի հետ տարվող աշխատանքի կազմակերպումը: 2. Անձնակազմի հետ տարվող աշխատանքների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները: 3. Ոստիկանության կադրերի պատրաստման ժամանակակից էթիկական բաղադարատարրը:	Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման ձևով, որտեղ առանձնակի ուշադրություն է դարձվում ուսանողների կողմից ներկայացված խնդրահարույց հարցերին: Հարցեր 1-3 - անցկացվում է սեմինար պարապմունք (սեմինարը կարող է անցկացվել խմբային քննարկման միջոցով): Սովորողը նախապատրաստվում է սեմինարին դասախոսի նախապես հանձնարարված մասնագիտական գրականության համապատասխան էջերը ուսումնասիրելով: Հարցեր 1-3 – ինքնուրույն աշխատանք: Ուսանողները նախօրոք ծանոթանում են հանձնարարված գրականությանը: